



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿՆԵՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2023

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

12 (16)

ԵՐԵՎԱՆ 2023

ЕРЕВАН 2023

YEREVAN 2023

Երաշխավորվել է սպազրոթյան Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսա-
յականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:


Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №12
(16). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2023. – 266 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ЭФФЕКТИВНЫЕ МЕТОДЫ И СПОСОБЫ ОРГАНИЗАЦИИ ОНЛАЙН-УРОКОВ ПО ШАХМАТАМ

Мария Геворкян
asatryan.laura@mail.ru

*Аспирант кафедры педагогики,
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна,
Четырёхкратная чемпионка Армении по шахматам среди женщин,
Международный гроссмейстер по шахматам среди женщин
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье представлен план урока по шахматам, предложенный автором, эффективные способы организации урока, методы, технологии и средства. Представлены этапы обучения шахматам с разработанной автором аналитической доской.

Обосновано, что онлайн-обучение, в отличие от существующего обучения, дает ученику возможность иметь перед собой собственную доску, обучаться шахматам, сотрудничая с другими учениками онлайн, обогащать шахматные знания, развивать практические творческие способности, проверять свои силы на внутриклассных и внутришкольных турнирах и в одновременных сеансах.

Ключевые слова: начальная школа, шахматы, учебная деятельность, организация, онлайн, эффективные методы, стили обучения, исследования, младшая школа, экспериментирование, психические процессы.

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ առկա է այն հիմնավոր և ավագուցված տեսակետը, որ տարրական դպրոցը համարվում է հանրակրթության ամենակարևորագույն աստիճանը, որտեղ դրվում են

երեխայի բոլոր հոգեկան ֆունկցիաների՝ ընկալման, մտածողության, խոսքի, երևակայության, ուշադրության, հիշողության, ստեղծագործական, ընդունակությունների, մտավոր, բարոյական, գեղագիտական զարգացման ինչպես նաև արժեքային կողմնորոշումների, քաղաքացիական դիրքորոշումների ձևավորման գիտական հիմքերը:

Ինչ խոսք, անցումը նախադպրոցական աստիճանից տարրական դպրոց հիմնավորապես փոխում է երեխայի կյանքը. խաղերի աշխարհից միանգամից անցում է կատարվում ուսումնական գործունեության, որին դժվար է հարմարվում երեխան: Չնայած, որ շատ գիտնականների կարծիքով երեխաները համար ուսումնական գործունեությանը զուգահեռ խաղը կանոր դեր է կատարում նրանց կյանքում: Ըստ Դ.Բ. Էլկոնինի՝ խաղը գործունեություն է, որի ընթացքում, ձևավորվում և կատարելագործվում է վարքի կառավարումը [5]:

Այս պարագայում դպրոցի առաջնային խնդիրն է դառնում այնպիսի հետաքրքիր կրթական միջավայրի ստեղծումը, որտեղ կրտսեր դպրոցականը իրեն կզգա հարմարավետ և հետաքրքրություն ու ակտիվություն կցուցաբերի ուսումնական գործընթացի նկատմամբ, աստիճանաբար կձևավորվի վարքը:

Այդ գործում էական դեր են կատարում տարրական դպրոցում դասավանդվող առարկաները՝ մայրենին, մաթեմատիկան, «Ես և շրջակա աշխարհը», շախմատը, տեխնոլոգիան և այլն: Մեր հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից կանգ առնենք «շախմատ» առարկայի կարևորագույն դերի և նրա ուսուցման արդյունավետ ձևերի ու մեթոդների բնութագրման վրա:

Անժխտելի է, որ շախմատը էական նշանակություն ունի կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողության, ուշադրության, ստեղծագործական ընդունակությունների զարգացման գործում: Այսինքն՝ շախմատն ունի և՛ զարգացնող և դաստիարակչական մեծ ներուժ: Այս տեսանկյունից մենք համամիտ ենք ռուս ականավոր մանկավարժ Վ.Ա. Սու-

խումլինակու հետ, ով իրավացիորեն նշում է, որ շախմատը պետք է մտնի կրտսեր դպրոցականի կյանք՝ որպես նրա մտավոր մշակույթի կարևոր տարրերից մեկը [2]: Այդ կարծիքին է նաև աշխարհահռչակ շախմատիստ Բ. Ֆիշերը: Ըստ նրա՝ կրտսեր դպրոցականի համար շախմատը միայն մտավոր ընդունակությունների զարգացման ուղղություն պետք է ունենա, առանց մրցակցի հետ որևէ հակամարտության [4: 147]:

Ելնելով մեր տարիների շախմատային գործունեության փորձից՝ մենք կարծում ենք, որ շախմատը զարգացնում է երեխայի մտավոր և ստեղծագործական ընդունակությունները, տրամաբանությունը, բարոյակամային որակները, հանդուրժողականությունը: Շախմատային գործունեությանը հատուկ են որոշակի անձնային հատկանիշներ՝ շախմատային մտածողությունը, մտքի ճկունությունը, արդյունավետ ռազմավարության ընդունակությունը, ոչ ստանդարտ իրավիճակներում լուծումներ գտնելու, յուրօրինակ քայլեր և իմպրովիզացիա կատարելու կարողությունը:

Պրոֆեսոր Լ.Թ. Սաստրյանի կարծիքով. «անձնային հատկանիշների զարգացումը կախված է տարիքային առանձնահատկություններից, անհատական ընդունակություններից, հետաքրքրությունների ուղղվածությունից: Հատկապես ակտիվորեն ձևավորվում են այնպիսի անհատական ներքին որակներ, ինչպիսիք են՝ ուշադրության կայունությունը, դատողությունների աստիճանը, հուզականությունը, մտավոր հնարավորությունները» [1: 9]:

Ելնելով այն իրողությունից, որ Հայաստանը շախմատային գերտերություն է, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ շախմատը անձի մտավոր, ստեղծագործական ընդունակությունների, տրամաբանության, բարոյակամային և քաղաքացիական և այլ հոգեկան որակների զարգացման հզոր ներուժ ունի, շախմատը ներառվեց տարրական դպրոցի կրթության բովանդակության մեջ:

Սակայն մինչև այսօր էլ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ այդ առարկայի ուսուցման արդյունավետությունը բարձր հիմքերի վրա դնելու համար: Դրանցից են առագին հերթին շախմատի ուսուցման մեթոդների ու ձևերի անկատարությունը:

Մեր հետազոտության հիմնախնդրի առաջադիր վարկածից ելնելով փորձել ենք մշակել տարրական դպրոցում շախմատի ուսուցման, դասերի արդյունավետ ձևեր և մեթոդներ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև:

2020 թվականը տարբեր առումներով փոխեց մարդկանց կյանքը ամբողջ աշխարհում: Կորոնավիրուսային համավարկի պայմաններում մարդիկ ստիպված էին փակվել տանը և աշխատել առցանց պայմաններում:


Համավարկի պատճառով առցանց կրթությունը դարձավ մեր կյանքի անբաժանելի մասը և ուսուցման հիմնական ձևը: Շախմատը բացառություն չէր: Մրցաշարերը, շախմատի պարապմունքներն ու դասերը դարձան առցանց, ուստի շախմատի կայքերից ամենահայտնիները՝ www.chess.com, www.lichess.org, www.chess24.com և այլն սկսեցին անհավանական մուտքերի քանակ գրանցել: Այս պարագայում մեծ տարածվածում գտավ նաև սթրիմը (ուղիղ եթերով դիտորդների հետ շախմատային տարբեր միջոցառումներ անցկացնելը)՝ հիմնականում *twitch.tv* և *youtube.com* հարթակում:

Մենք փորձ արեցինք շախմատի փորձարարական պարապմունքները (դասերը) նույնպես առցանց կազմակերպել: Փորձարարական խմբերի հետ կազմակերպեցինք շախմատի առցանց ուսուցման տարբեր ձևեր՝ սթրիմներ, վիդիո դասեր, ուսուցողական սեանսներ (օրինակ, նոր սովորած սկզբնախաղերի), անհատական և խմբակային պարապմունքներ: Կորոնավիրուսային համավարկի պայմաններում հատկապես նպատակադիր եղանք մշակել շախմատի առցանց դասերի, անհատական և խմբակային պարապմունքների կազմակերպման մեթոդներ ու ձևեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներքոբերյալ կայքերը իրականում թույլ են տալիս ուսումնական պարապմունքները կազմակերպել առցանց՝ մենք նախընտրեցինք շախմատի ուսուցման առցանց պարապմունքները անցկացնել chess.com կայքում, չնայած, որ lichess.org-ը ավելի կատարելագործված միջոցներ ունի:

Փորձարարական խմբերի մասնակիցներին հրահանգավորվեց այցելել և գրանցվել **Chess.com > Play > Live Chess > Analyzes Board:**

Փորձարարական խմբերի մասնակիցները պետք է աշխատեին մեր կողմից ստեղծված շախմատի պարապմունքի վերլուծական տախտակի վրա, որը ներկայացված է թիվ 1 գծապատկերով: Դրա վրա փորձարարական խմբերի մասնակիցները սովորելու էին մեր կողմից մշակված շախմատի դասի պլանով և ուսուցման մեթոդներով:




Գծապատկեր թիվ 1. Ինչպես ստեղծել վերլուծական պարապմունքի տախտակը

Նշեմ, որ փորձարարական խմբերի մասնակիցները կարող էին միանալ միայն պարապմունքի տախտակը ստեղծողի հրավերով, սեղմելով + և այնուհետև նշելով իրենց անունը (**գծապատկեր թիվ 2**):

Տախտակ սեղծողը կարող է մաքրել և տեղադրել այն դիրքը, որը որ կցանկանա, ինչպես նաև կարող է PGN ֆայլը ամբողջությամբ ներբեռնել և ցուցադրել արդեն իսկ պատրաստ դիրքերը կամ վերլուծված պարտիաները:

Իհարկե տախտակին կարող են միանալ նաև անսահմանափակ թվով մասնակիցներ: Սակայն, որպեսզի բոլորը հնարավորություն չունենան շարժելու խաղաքարերը, տախտակը տնօրինողը կարող է որոշել մասնակից աշակերտի գործառույթը՝ դիտորդ (observer) կամ աշակերտ (student): Այս պարագայում խաղաքարերը շարժելու հնարավորություն ունի միայն աշակերտը:



Գծապատկեր թիվ 2. Ինչպես հրավիրել մասնակիցներին միանալու վերլուծական պարապմունքի տախտակին

Որպեսզի փորձարարական խմբերի մասնակիցները չտեսնեն պատասխանները Notation բաժնից, այն կարելի փակել և այդ դեպքում միայն տախտակի ստեղծողը կտեսնի այն (գծապատկեր թիվ 3):



Գծապատկեր թիվ 3. Ինչպես թաքցնել գրառված քայլերը

Շախմատի դասերի պլանները մշակելուց հետո, մենք սկսեցինք փորձարարական պարապմունքները (դասերը) հետազոտական բազա հանդիսացած ՀՀ ուսումնական և արտաուսումնական հաստատություններում (որպես դասի պլանի օրինակ բերված **«Տեղափոխություն»** թեման) :

Դասի պլան 1

Դասարան 2-րդ

Դասի թեման «Տեղափոխություն»

Դասին կիրառվելիք ուսուցման մեթոդները և տեխնոլոգիաները՝ քեյս ստադիի մեթոդ, համագործակցային տեխնոլոգիա:

Դասին կիրառվելիք ուսուցման միջոցները՝ շախմատի վերլուծական տախտակ, համակարգիչ, chess.com կայքում և համակարգչի ZOOM հավելված:

Դասի նպատակները՝

- Տնային առաջադրանքի կատարման ճշտության ստուգում,
- Տնային առաջադրանքի հասկացման մակարդակի բացահայտում,
- Անցած նյութի վերաբերյալ գիտելիքների յուրացման մակարդակի բացահայտում,
- Նոր թեմայի բացատրություն,
- Նոր թեմայի ամրակայում,
- Դասի աղյուսների ամփոփում:

Դասի ընթացքը.

Քայլ առաջին՝ վերհիշում ենք արքայի և նավակի գործառույթները և նրանց սկզբնական դասավորությունը (10 րոպե) :

Քայլ երկրորդ՝ աշակերտներին նախապատրաստումը նոր թեմայի յուրացմանը.

- հաղորդել նոր դասի թեման՝ **«Տեղափոխություն»**,
- ցույց տալ նրա գործնական նշանակությունը,
- կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը և խթանել հետաքրքրությունը:

● Բացատրել արքայի և նավակի քայլերը, տեղափոխության հնարավորությունները: Բացատրել, որ չնայած այն բանին, որ արքան մեկ քայլ կարող է կատարել, սակայն, ըստ խաղացողի ընտրության այն փոփոխելի կդառնա, եթե՝

- ✓ արքան և նավակը իրենց սկզբնական դիրքերից չեն տեղաշարժվել,
- ✓ նրանց արանքում որևէ այլ խաղաքար չկա,
- ✓ արքայի և նավակի միջև գտնվող դաշտերից որևէ մեկը չի գտնվում հակառակորդի խաղաքարերից մեկի հարվածի տակ, քանի որ, այս պարագայում արքան կարող է տեղաշարժվել 2 դաշտ աջ և այնուհետև նավակին տեղափոխել արքայի ձախ կողմ: Սա կկոչվի՝ կարճ տեղափոխություն: Բացատրել

Նշել, որ վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև այն հանգամանքին, որ արքայի և նրա ձախ կողմում գտնվող նավակի միջև բաց է տարածությունը և նրանցից ոչ մեկ չի տեղաշարժվել: Այս դեպքում արքային տեղաշարժում ենք 2 դաշտ դեպի ձախ, իսկ ձախ կողմի նավակին բերում արքայի աջ դաշտը: Այս քայլը կկոչվի երկար տեղափոխություն:

Սևերի կողմից դիտարկելու դեպքում կարճ տեղափոխության ժամանակ արքան կգնա ձախ, իսկ երկարի ժամանակ՝ աջ:

Կարևոր է տեղափոխություն կատարելու ժամանակ առաջինը ձեռք տալ և տեղափոխության գործողությունը սկսել արքայից:

Քայլ երրորդ՝ ամփոփել թեման և շախմատային դիրքերի վերաբերյալ համընդհանուր և անհատական հարցերի միջոցով ստուգել արդյոք աշակերտները յուրացրեցի՞ն դասանյութը, թե ոչ:

Այս դասն անցկացնելու համար մեզ անհրաժեշտ եղավ օգտագործել chess.com կայքի տախտակը և համակարգչի ZOOM հավելվածը, որից օգտվում են հանրակրթական դպրոցները:

Հաջորդիվ ներկայացնենք մեր կողմից մշակված մեթոդի էությունը:

Փորձարարական առաջին խմբում ներառված էին 16 աշակերտ, իսկ 2-րդ խմբում՝ 14: Փորձարարական դասի տևողությունը 1 ժամ: Պարապմունքի մասնակիցները 5 րոպե առաջ միանում են ZOOM-ի հղմանը: Տախտակը նպատակահարմար է ստեղծել հանրային, քանի որ ժամանակատար է բոլորին անհատապես հրավիրել միանալու տախտակին, իսկ հանրայինով մեկ հպումով կարելի է միանալ: Լինքը կարելի է տեղադրել ZOOM-ի Chat բաժնում:

Բացի նրանից, որ պարապմունքի բոլոր մասնակիցները միանում են տախտակին, ուսուցիչը կիսում է իր էկրանը, որպեսզի նաև ZOOM-ում հասանելի լինի: Բոլոր մասնակիցների բարձրախոսները պետք է անջատված լինեն, նրանք կարող են խոսել միայն ուսուցչի թույլտվությամբ: Ինչպես նաև մասնակիցներից ոչ մեկ չի կարող քայլ կատարել հիմնական տախտակի վրա, քանի դեռ ուսուցչը նրան «աշակերտի» (student), գործառույթի թույլտվություն չի տվել:

Շախմատի ուսուցման այս մեթոդով կազմակերպված դասի մասնակիցները հնարավորություն են ստանում լուծել խնդիրներ, քննարկել դիրքեր, սովորել սկզբնախաղեր և այլն, այս մեթոդով հնարավոր է դառնում բոլոր մասնակիցներին ներգրավել խաղի մեջ: Այն ավելի աշխատատար և ժամանակատար է ուսուցչի համար, բայց երեխաները սիրով են մասնակցում այդ դասերին:

Այս տիպի դասերի անցկացման համար մենք ընտրել ենք ուսուցման համագործակցային տեխնոլոգիան: Երբ աշակերտների քանակը գույգ է նրանց բաժանում ենք թիմերի՝ սպիտակ և սև՝ նշելով հերթականությունը: Նրանք պետք է հերթով քայլ կատարեն: Յուրաքանչյուրի անունը ասելուց առաջ նրանց կարելի է փոխել՝ որպես աշակերտ (student), որից հետո միայն նրանք կարող են կատարել հաջորդ քայլը: Այսպիսով, բոլոր աշակերտները մասնակցում են շախմատային պարտիային՝ կատարելով իրենց քայլերը: Պատասխանատվությունը մեծ է, քանի որ ի-

րենք պատասխանատու են իրենց կատարած քայլի համար և իրենց թիմի արդյունքը կախված է նրանցից յուրաքանչյուրի կատարած քայլից:

Մեր կողմից մշակված հաջորդ մեթոդը դասի ընթացքում առցանց միաժամանակյա խաղի սեանս անցկացնելն է: Աշակերտները յուրաքանչյուրն իր հերթին միանում է իր խաղին և խաղում է ուսուցչի դեմ: Այս ժամանակ արդեն յուրաքանչյուրի մասնակցի ժամանակը սահմանափակ է: Սովորաբար միաժամանակյա խաղի սեանս անցկացնողը խաղում է սպիտակներով, իսկ մասնակից մրցակիցները՝ սևերով:

Շախմատի ուսուցման այս մեթոդը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի անհատական խաղալ ավելի ուժեղ շախմատիստի դեմ: Այնուհետև աշակերտներին հանձնարարվում է վերլուծել իրենց խաղացած պարտիան և PGN ֆայլը ուղարկել ուսուցչին, որպեսզի ամբողջ խմբով կարողանան նայել, վերլուծել և գտնել իրենց սխալները:

Ի դեպ, շատ հատկանշական է, որ յուրաքանչյուր դիտարկված դիրք, պարտիա, սկզբնախաղ կարելի պահել համակարգչում և կրկնել, երբ ցանկություն առաջանա: Պարզապես պետք է սեղմել download կոճակը (գծապատկեր թիվ 4):



Գծապատկեր թիվ 4. Ինչպես պահպանել դասի ժամանակ իրականացված ուսումնական աշխատանքը

Մեր կողմից որպես շախմատի ուսուցման արդյունավետ ձև առաջարկվում է նաև առցանց մրցաշարերի կազմակերպումը նույն և տարբեր դասարանների աշակերտների միջև, որի ժամանակ մասնակիցները և՛ սովորում են, և՛ դրսևորում են իրենց շախմատային գիտելիքները, ինչը և խթանում է նրանց դրդապատճառային ոլորտը՝ մղելով նրանց ակտիվ ուսումնախաղային ստեղծագործական գործունեության:

Այսպիսով՝ առցանց ուսուցումը, ի տարբերություն առկա ուսուցման, հնարավորություն է տալիս աշակերտին իր առջև ունենալ իր անհատական տախտակը, շախմատը սովորել՝ առցանց համագործակցելով մյուս երեխաների, զարգացնել գործնական կարողությունները, փորձարկել իր ուժերը ներդասարանային և ներդպրոցական մրցաշարերում ու սեանսներում:

ЛИТЕРАТУРА

1. *Асатрян Л.Т.* Развитие творческих технических способностей школьников в кружках станций юных техников // Автореф. дисс. ... канд. педагог. наук: (13.00.01) / АПН СССР, НИИ трудового обучения и проф. ориентации. – М., 1987. – 18 с.
2. *Сухомлинский В.А.* Сердце отдаю детям. – Киев: Радянська школа, 1978. – 143 с.
3. *Теплов Б.Н.* Проблемы индивидуальных различий. – М.: Изд-во Акад. пед. наук РСФСР, 1961. – 536 с.
4. *Фишер Б.* Бобби Фишер учит играть в шахматы. – Киев: Здоровья, 1991. – 276, [2] с.
5. Шахматный Интернет: игра и обучение. – М.: Новый диск ЗАО «Информ-Системы», 2002–2-00-S*г. –43D.
6. *Якиманская И.С.* Личностно ориентированное обучение современной школе. – М., 1996. – 96 с.

**ՇԱԽՄԱՏԻ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ**

Մ. Գևորգյան

asatryan.laura@mail.ru

*Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ,
Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան,
Հայաստանի կանանց շախմատի քառակի չեմպիոնուհի,
Շախմատի կանանց միջազգային գրոսմաստեր
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է հեղինակի առաջարկած շախմատի դասի պլանը, դասի կազմակերպման արդյունավետ եղանակները, մեթոդաբանությունը, տեխնոլոգիաները և ռեսուրսները: Ստորև բերված են հեղինակի կողմից մշակված վերլուծական տախտակի միջոցով շախմատ սովորելու քայլերը:

Հիմնավորված է, որ առցանց ուսուցումը, ի տարբերություն առկա ուսուցման, սովորողին հնարավորություն է տալիս իր առջև ունենալ սեփական գրատախտակը, սովորել Շախմատ՝ համազործակցելով այլ սովորողների հետ առցանց, հարստացնել շախմատային գիտելիքները, զարգացնել գործնական կարողությունները, ուժերը փորձարկել ներդարացական և ներդարացական աշխատանքներում: մրցաշարերում և միաժամանակյա խաղի սեանսներում:

Բանալի բառեր՝ տարրական դպրոց, շախմատ, ուսումնական գործունեություն, կազմակերպել, առցանց, արդյունավետ մեթոդներ, ուսուցման ձևեր, հետազոտություն, կրտսեր դպրոցական, փորձարարություն, հոգեկան գործընթացներ:

EFFECTIVE METHODS AND WAYS TO ORGANIZE ONLINE CHESS LESSONS

M. Gevorgyan

asatryan.laura@mail.ru

*Post-graduate student,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Four-time Armenian Women's Chess Champion,
Women's International Chess Grandmaster
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

The article presents the chess lesson plan proposed by the author, effective ways of organizing the lesson, methods, technologies and resources. Here are the steps for teaching chess with an analytical board developed by the author.

It is justified that online training, unlike existing training, gives the student the opportunity to have his own board in front of him, to learn chess by cooperating with other students online, to enrich chess knowledge, to develop practical abilities, to test his strength in intra-classroom and intra-school tournaments and in simultaneous sessions.

Keywords: elementary school, chess, learning activities, organize, online, effective methods, learning ways, research, junior school, experimentation, mental processes.

Информация о статье:

*статья поступила в редакцию 10 сентября 2023 г.,
подписана к печати в номер 12 (16) / 2023 – 15.12.2023 г.*